

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ք

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ք Ի Ի Ն Ք

Հայազգի մասնագետ բժշկապետի մը

Աչքի, Ակամբի և Քթի հիւսմնութեանց վրայ:

Բազմալեզու Յունուար ամսաթուի մէջ՝ ներկայացուցինք մեր ընթերցողաց՝ Պատուայի Համալսարանին՝ բժշկական և վիրաբուժական ընթացքն աւարտողներու կարգին մէջ նաև բժշկապետ Անտոն Միխանան: Այսօր կ'ուզենք խօսիլ համաստիս իրեն գրած աւարտածառին (tesi) վրայ և համաստիս վարունակութիւնը:

Այդ ճառը կը կրէ հետեւեալ տիտղոսը. *Rapporti fra le malattie oculari e quelle del naso e cavità annesse*, այսինքն է՝ Աչքի հիւսմնաբարեկենդան շարունակութեանը՝ քթի և յարակից խորշերու հիւսմնաբարեկենդանը:

Բժպտ. Միխանանի տոյն աշխատօրութիւնը. 1905, յուլիս 6ին, Օվիոյ աշարոյժը համալսարանի 13 քննիչ բժշկապետներու յանձնաժողովին ներկայացուց և ջատագովեց:

Հիգիենական պատուաբեր և լուրջ աշխատասիրութիւն մը պատուեցաւ այս պոքը, լի սեփական նորանոր գիտողութիւններով:

Այլա բժպտ. Միխանան ընտրեալ առագանութեամբ և համոզիչ փաստերով ներկայացուց իւր տեսական վարպետութեան ընթացքը: Գրեթէ մէկ ժամ՝ պատասխանեց և բանավիճեց իրեն եղած առարկութիւններուն վրայ: Ծափահարուեցաւ և ստացաւ ՏՕԳԹՕՐԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԵԱՅԱԿՆՆԸ:

Բժշկապետները հաճեցան այս ոգտաշատ աւարտածառը իրենց ծախքով գիտական լիութիւնը մէջ հրատարակել՝ կից իրենց յուլաձեռնարան:

Միծաղիք 20 էջեր բաղկացած այս հմտալից գրութիւնը կարգալով՝ պատշաճ դատեցանք հետեւեալ ամփոփումն ընելու:

Անխոփումն աւարտածառին. — Աչքի և քթի հիւսմնութեանց իրարու հետ ունեցած յարաբերութիւններու վրայ՝ գրեթէ զարէ մ'ի վեր խօսած են Ռիխտեր (Richter), Սկարպա (Scarpa), Հիւնտեր (Hünter), և այլք:

Քայց բուն հիմնական ուսումնասիրութիւններ եղած են և կ'ըլլան նշանաւոր աշարուժներ և սնգարոյններ վերջին 25 տարիներու ընթացքին մէջ: Կոջոլինոյ (Cozzolino), Բէրտէ (Berger), Բրնուա (Benoît), Տրուսոյ (Trousseau), Արսլան (Arslan), Յիէմ (Ziem), Գրինինգ (Grüning), Մաքսուէլ (Maxwell), և այլն, և այլն. այնպիսի հեղինակներ են՝ որոնց խօսքն և գիտողութիւնը միշտ պիտի յարգուին:

Բժպտ. Միխանան կ'ընէ թէ լոյս տեսած աշխատութիւնները բազմաթիւ են, սակայն անոնք այս ինչ կամ այն ինչ պարագաներու վերագրուած մասնական գէպքեր նկատողութեան կ'անուն, և անկատար են ընդհանուր գրութիւն մը հաստատելու համար: Իսկ ինքը հիմնուելով անդամագնութեան (anatomia), բնախօսութեան (fisiologia), և բնախօսախտաբանութեան (fisiopatologia) վրայ՝ կ'ուսումնասիրէ աչքի այն շարք մը հիւսմնութեանց պատճառները՝ որոնք քթի հիւսմնութիւններու հետ ամենամեծ ազդեցութիւն ունին:

Այլա *Teorie patogeniche* վերնազրոյ տակ կը ցուցադրէ և հմտաբար կը քնննադատէ մի առ մի այն տեսութիւնները՝ որ երեւիք աշարուժներ և սնգարուժներ հրատարակած են, տեսութիւն շարունակութեամբ ծաւալման (*teoria della propagazione per continuità*), տեսութիւն անօրայիս (t.

vascolare), տնտրիակ զդային (t. nervosa), տնտրիակ վարակիչ (t. infettiva) և այլ մակարբերով: Ասոնց հեղինակները կը ճգնին աչաց և քթի հիւանդութիւններու իւրար հետ ունեցած յարաբերութիւնները բացայայտել:

Կը թուէ նաև աչքի այն հիւանդութիւնները՝ որոնց սկզբնապատճառները քթին կախումն ունին. և կ'ըսէ՝ թէ աչային հիւանդութեանց ախտածնութեան (patogenesi) մէջ, որոնք քթի ֆետտուածութենէ առաջ եկած են, պէտք է առաջին տեղին առաջ ածուցական գեղձակերպերու (vegetazione adenoidi):

Շատ հեղինակներ հազիւ անցողակի կը յիշատակեն արբ գեղձակերպերը: Ուրիշներ կ'ընդունին որ անոնք կարող են պատճառ ըլլալ աչաց մէկ երկու ձեւափոխութեանց և կամ արտասուաց անցքի ախտաբանութեան, և այլն:

Յետոյ բժպտ. Միխիտեան 18 հիւանդներու վրայ կատարած սեփական հետազոտութիւններու վրայ հիմնուելով՝ նոր տեսութիւն (teoria) մը առջեւնիս կը դնէ, որ է. «Աչքի կարգ մը հիւանդութիւններն ուրիշ բան չեն, բայց եթէ ուղղակի հետեւանք սեզափոդի (naso-faringe) մէջ բուսած աձակակ գեղձակերպերու, կամ որ նոյնն է՝ գեղձակերպ պարարներու (tumori adenoidi) գոյութեանը»: Այս պաշարներն իրենց ներկայութեամբ կը պատճառեն աչքի հիւանդութիւններու երկար շարք մը: Չանոնք բուժելու համար՝ պէտք է նախ այդ գեղձակերպերը դարմանել՝ պատշաճ գործողութեանց դիմելով: Ապա երբ պաշարները բժշկուելով անհետանան՝ պէտք է դարմանել աչքը:

Բժպտ. Միխիտեան կ'ըսէ թէ իւր նկատուողութեան առած 18 հիւանդները՝ ամիսներէ և նոյն իսկ տարիներէ ի վեր կը յաճախեն եղբ հիւանդանոց, և սովորական շուփայնեցու կամ աչագեղձերու (collirio) գործածութեամբ՝ բնաւ լուուութիւն չէին դպար: Իսկ ինքը քննելով անոնց քթիւր և ռնափողերը, գրեթէ ամենուն մէջ կը գտնէ աճողական գեղձակերպեր, խոցեր (lesioni), քթածակերու մալբար (eczema), խտարումն քթի խորոցին (setto nasale), գիրութիւն կամ սնընդականցութիւն եղջերիկներու (ipertropia

dei cornetti), և այլն, և այլն: Այսպիսի հիւանդութիւններէն մին կամ ուելին ունեցող ենթականերու քթին մէջ վիրաբուժական հատուցներ կատարելով՝ նախ կը ջնջէ աճողական գեղձակերպերը կամ ուրիշ խոցերը, ապա կարեւոր աչագեղձեր կիրարկելով՝ 24 ժամ վերջը զգալի բարեփոխութիւն կը տեսնէր հիւանդ աչքերու վրայ, իսկ 10-15 օրէն կատարելապէս կը բժշկուէին, մինչդեռ ուրիշ մի և նոյն տեսակ հիւանդներն, որոնք իւր դրութեամբ չէին խնամուեր՝ անբուժելի կը մնային:

Այս իրողութիւններս շեշտելէ վերջը, Բժպտ. Միխիտեան կը բացատրէ նաեւ իւր գաղափարը թէ ինչ եղանակով՝ աճողական գեղձակերպերը կը ներգործեն տեսութեան շղթայ և ամբողջ աչքի գործարանին վրայ: Կ'ըսէ՝ թէ « Գեղձերը, ռնափողերու պաշարները, մալբարը և քթի ուրիշ խոցերը կը տեղեկեն այնպիսի պայմաններ (condizioni), որոնք անհրաժեշտ աչքի զանազան թաղանթները կը ֆուսեն, կը հիւանդացան: Չնչելով պատճառները՝ կը վերանս վատ արգասիքները »:

Բանիմաց բժիշկը քսոնի մ'օգտակար եզրակացութիւններով կը վերջացընէ իւր խօսքը: Կը պնդէ թէ աչարոյժ մը՝ պէտք է որ ըլլայ նաեւ ռնափոլոյս վերջինս՝ իրեն ներկայացող աչքի-հիւանդներուն հետեւեալ ուճով խնամք տանելու է.

Ա. - Մտանաւորապէս պէտք է գտնէ անշարժաց տեսութեաններու քով (որոնք աւշային կնիք արտայայտող աչքի հիւանդութիւններէ լուուած են), քթի փողերու հիւանդութեան, սկարատեսութեան պատճառը (astenopia), որ բեկբեկման (refrazione) ախտէն առաջ չեն եկած, և այլն: Լաւ է որ անոնց նախ քթի խոռոչներուն և մասնաւոր ռնափոլոյս (rinofaringe, որ աճական գեղձակերպի կեդրոնատեղին է) ֆետտուցները դարմանէ, վասն զի անոնք ամենամեծ կարեւորութիւն ունին այս տեսակ աչային հիւանդութեանց ապաքինման համար:

Բ. - Ստուգելով աճական գեղձակերպներու գոյութիւնը՝ օգտակար է հիւանդը անոնցմէ շուտով ազատել:

Գ. — Աշային ֆետուսիները քթային խանգարումի ցուցեցեալ ազդեցութենէ (azione riflessa) առջ եկած ըլլալը հասկընալու լուսազոյն կերպն՝ կը կայանայ ճնշորմանային միջնայայրը կոկայինելու (cocainizzare, անզգայացնելու) մէջ:

Եթէ աշային խանգարումն՝ այս պարզ միջոցով վայրկեանաբար կը լանայ և այնպէս կը մնայ ամբողջ կոկայինի (անզգայացման) ներդրածութեան տեսողութեամբը, անտարակուսելի է թէ եմփանկանելու աչաց ֆետուսը բռնէն կիրումն ունի:

Գ. — Շատ մեծ կործարութիւն ունի բմաց ծծակներու (tonsille palatine) զննութիւնը, վասն զի եթէ անոնք գիրութեան կամ սննդագանցութեան և կամ զայրուկի (inflammazione) մէջ են՝ կարող են պատճառ ըլլալ աչաց չիւանդութեան:

Ե. — Արատասարթոկատապի (dacriocistiti) և մանուսնոց արտաստարակի և մանուսնոց պարագային մէջ՝ պէտք է զննել սնկափողերը. վասն զի ապաւելցուած է որ սայնոյխի հիւանդութիւններէն 95-97 առ % քթի անցքերու չիւանդութենէն կիրումն ունին. ուստի եթէ միայն աչքերը բուժելու զբաղուի՝ բնաւ լաւ արդիւնք մը չի ստացուիր:

Զ. — Պատշաճ է նաեւ ակունքներու զննութիւնն ընել, վասն զի ստոնոց վիճակն ալ մասնաւորապէս ցուցեցեալ ներդրածութեամբ կրնայ ազդեցութիւն ունենալ աչաց վրայ:

Բժպատ. Միլիտանի տառջարկած սեռով պարման մասուցող բժիշկը՝ անտարակապ մեծ զսննութիւն պիտի զգայ, տեսնելով որ իւր օգտակար ծառայութիւնը յաջողութեամբ կը պտակուի: Պիտի սնննայ նաեւ սերտութիւն, վասն զի իրեն զիւնոց հիւանդները փութով և մշտատեւ բժշկած պիտի ըլլայ իսկ հին գրութեան հետեւորդ և հիւանդը՝ յուսահատ պիտի մնան, վասն զի երկարատեւ խնամուելէ վերջն ալ՝ կամ բնաւ առողջացած պիտի չըլլան և կամ՝ անկատար:

Նորագոյն բժշկապետին արտասանած աւարտածասի վարկին բարձրութեան ահաւատաշեղ եղաւ սրտագրաւ տեսարան մը:

անոր ընթերցումն և վիճարանուելէ անմիջապէս վերջը՝ քննել Ուսուցչապետ Արսւսն ուրախութեան արտաստուք և գրկախոն համբուրի պատուեց իւր արժանաւոր աշակերտ:

Բժպատ. Միլիտանն՝ որպէս զի գիտ տելի կատարելագործուի իւր սիրած մասնահիւզին մէջ՝ ընտրեց ժամանակ մը եւս զրկուիլ հայրենի յարկէն, և մնալով իւր նախկին Ուսուցչապետներուն քով՝ անձամբ կատարել շատ մը փորձեր և գործողութիւններ: Նա կը փափաքի Է. Պոլիս գառնալ քաջալարած մասնագիտի համբաւով:

Մեր ընդունած տեղեկութիւններուն համեմատ Բժպատ. Միլիտանն հսկայաբայ սկսած է յառաջագոյնել. Օփիոյ աչքբուժին պատռոյ ընթերցուց անուանաւցում. և հրատարակեց հետեւեալ երեք աշխատութիւնները. — Ա. *Operazione di plasticità per ilicare l'occhio artificiale in casi di curati ristretti.* — Բ. *Apparecchio motore del bulbo oculare.* — Գ. *La medicazione chirurgica in oculistica:* Վերջին երկուքը պատկերագրով են:

Հ. Ն. ՏԻՐԱՆՈՒԵԱՆ

ԳԻՒՏԵՐ, ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. — Լուսաւորման երբ կըսեակ մը. — Գազգիացի մը Պ. Լուզովիկոս Տընէյրուզ, որ առաջին անգամ՝ Փարիզու Օփէլայի փողոցին մէջ կրաւ երկարակտե յայտ, յետոյ կրաւ և ալլուլը, այժմ՝ հնարած է լուսաւորող նոր նիւթ մը. նա զայն անուանած է *Lusol*. Նոր սեսակ բազապրութիւն մ'է չրածէի և զեստածոյի: Իւր շողիին խտութիւնը շատ բնէ և, իսկ ամուխի քանակը՝ շատ առատ. այս պատճառաւ թէ՛ գերբողորձածելի է, և թէ՛ զօրաւոր լոյս կու տայ:

Ահաւաստի ինչ կ'ընէ իւր հնարողը՝ *Lusol*ի մասին:

« *Lusol*ի լոյսը, յառաջ կու գայ կանթեղներու մէջ՝ որոնք արտաքին տեսքով ալքոհլի կանթեղի կը նմանին: Ներքին կալմութիւնը ամենապարզ է. այս փորձիկ ա-